Minnesota Population Center

Rural Locality Listing Instructions
Order N31

Census: 2001
Armenia

IPUMS-International
funded by the University of Minnesota and the National Science Foundation Grant SES-0433654
Minneapolis, Minnesota USA: 2006

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՅԼ ԲՆԱԿԱՏԵՂԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Երևան - 2001

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2001թ. մարդահամար

Հաստատված է
ՀՀ վիճակագրության պետական խորհրդի
28.02 2001թ. № 31 որոշմամբ

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՅԼ ԲՆԱԿԱՏԵՂԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱՋՄԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Երևան 2001

I. Ընդհանուր դրույթներ

1. Գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակների (այսուհետև գյուղական բնակավայրերի ցուցակների) կազմումը հանդիսանում է մարդահամարի նախապատրաստման հիմնական աշխատանքներից մեկը: Դրանք անհրաժեշտ են.

- տարածքը մարդահամարային, հրահանգչական և հաշվային տեղամասերի ճիշտ բաժանելու,
- մարդահամարի ժամանակ բնակչության հաշվեգրման լրիվությունն ապահովելու,
- գյուղական բնակավայրերի ցանկը ճշգրտելու համար:

2. Գյուղական բնակավայրերի ցուցակները կազմվում են երկու օրինակից՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (այսուհետև՝ ԱՎԾ) կողմից մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների ժամանակացույցով սահմանված ժամկետներում, գյուղապետի աշխատակազմի քարտուղարի կողմից, գյուղական համայնքի հաշվառման տվյալների՝ ձև 1 «Համայնքի գրքի», ձև 2 «Գյուղական համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակի»,ձև 3 «Համայնքի այբբենական գրքի» հիման վրա:

3. Գյուղական բնակավայրերի ցուցակներում Ձև-2 գյուղական, գրանցվում են գյուղական համայնքի տարածքում գտնվող բոլոր բնակավայրերը (ներառյալ առանց բնակչության կամ ժամանակավոր կացատեղ հանդիսացող բնակատեղերը):

Ժամանակավոր կացատեղ հանդիսացող, ինչպես նաև բնակչության ոչ մշտական կազմ ու ծառայողական նշանակություն ունեցող հիմնարկները (օրինակ՝ անտառապահի տնակներ, օդերևութաբանական կայաններ, կիսակայարաններ և այլն) գրանցվում են այն բնակավայրերի կազմում, որոնց հետ դրանք կապված են վարչականորեն կամ տարածքային առումով: Հիմնական բնակավայրի բնակելի տներից հեռու գտնվող տները կամ տների խումբը, որոնք տարածքային առումով հանդիսանում են տվյալ բնակավայրի մի մասը (օրինակ՝ հիվանդանոց, մեղվանոց, ամառանոցային տներ, աշխատողների տներ և այլն), ցույց են տրվում հիմնական բնակավայրի կազմում:

Գյուղական բնակավայրերի ցուցակներում մտցվում են նաև այն կացարանները կամ տները, որոնք ցուցակները կազմելու պահին բնակեցված չեն եղել, սակայն մարդահամարի ժամանակ կարող են բնակեցված լինել (արհեստագործական խրճիթներ, անտառում բանվորական բարաքներ և այլն):

4. Գյուղական բնակավայրերի ցուցակների մեջ չեն մտցվում այն տնտեսական նշանակություն ունեցող շինությունները, որոնցում նույնիսկ ժամանակավորապես մարդ չի կարող բնակվել (ամբար, հարդանոց, մարագ և այլն):

Սույն հրահանգում օգտագործված տերմինները կիրառվում են միայն վիճակագրական նպատակով:

II. Ցուցակները կազմելու կարգը

5. Գյուղապետի աշխատակազմի քարտուղարը, ղեկավարվելով համայնքի տարածքում գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակները կազմելու հրահանգով, լրացնում է գյուղական բնակավայրերի և այլ բնակատեղերի ցուցակն՝ ըստ ձև 2-գյուղականի:

6. Ձև 2-գյուղականի հասցեամասում լրացվում են մարզի, տարածքի և համայնքի անվանումները:

7. Ցուցակում առանձին տողով գրանցվում են տվյալ համայնքի տարածքում գտնվող **բոլոր գյուղական բնակավայրերը**: Հիմնական բնակավայրին վարչականորեն պատկանող այլ բնակատեղերը գրանցվում են հիմնական բնակավայրից անմիջապես հետո: Ընդ որում պետք է հաշվի առնել, որ հիմնական բնակավայրի բնակելի տների և տնտեսությունների քանակի, ինչպես նաև բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները պետք է ներառեն նաև այդպիսի բնակատեղերի վերաբերյալ համապատասխան տվյալները:

1-ին սյունակում գրվում է գյուղական համայնքի սահմաններում գտնվող յուրաքանչյուր հիմնական բնակավայրի հերթական համարը:

2-րդ սյունակում գրվում է հիմնական գյուղական բնակավայրի սահմաններում գտնվող և նրա մասը կազմող յուրաքանչյուր այլ բնակատեղի (տան, տների խմբի) հերթական համարը:

3-րդ սյունակում գրվում է հիմնական բնակավայրի լրիվ անվանումը՝ համայնքի գրքում (ձև-1) կատարված գրանցումների համաձայն, ինչպես նաև այլ բնակատեղերի անվանումը, կամ դրանց որևէ բնութագրիչ հատկանիշ (օրինակ՝ անտառապահի տնակ, Ա. Սերոբյանի տունը):

Բնակավայրի անվանումը պետք է գրել լրիվ, առանց կրճատման, օրինակ՝ չի կարելի գրել «Ն.Գետաշեն», այլ պետք է գրել «Գյուղ Ներքին Գետաշեն»: Երկաթուղային կայարանները, կիսակայարանները և այլ բնակատեղերը գրելիս անպայման հարկավոր է նշել դրանց անվանումը, իսկ եթե անվանում չկա, նշել քանի

կիլոմետր հեռավորության վրա է գտնվում, (օրինակ՝ «Բաժանք 104 կմ»): Մեկ համայնքում մի քանի միատիպ բնակատեղերի առկայության դեպքում, որոնք չունեն անվանումներ կամ անվանումները միատեսակ են (օրինակ՝ «անտառային պահակատներ»), հարկավոր է նշել նաև տվյալ կետում բնակվողի անուն, ազգանունը:

4-րդ սյունակում գրվում է գյուղական բնակավայրի հեռավորությունը (կիլոմետրերով) մինչև համայնքի կենտրոն, ինչպես նաև այլ բնակատեղերի հեռավորությունը մինչև հիմնական բնակավայրը, որին դրանք պատկանում են:

5-րդ սյունակում գրվում է յուրաքանչյուր հիմնական բնակավայրի, ինչպես նաև դրա տարածքում գտնվող **այլ բնակատեղերի (տների)**, բնակելի շինությունների քանակն՝ ըստ համայնքի գրքի (ձև-1) տվյալների:

Բնակելի շինությունների քանակում պետք է հաշվի առնել նաև այն տները, որոնցում ցուցակները կազմելու պահին բնակչություն չի ապրել, ինչպես նաև կիսակառույց տները:

6-րդ սյունակում գրվում է տնտնությունների թվաքանակը՝ ըստ համայնքի գրքերի, ընդ որում, դուրս եկած տնտնություններն այդ քանակի մեջ չեն մտցվում:

7-րդ սյունակում գրվում է **առկա**, ներառյալ **ժամանակավոր բացակայող** բնակչության թվաքանակն ըստ համայնքի գրքի (ձև-1) տվյալների:

Ուսման մեկնած անձիք (անկախ բացակայելու ժամկետից) մշտական բնակչության թվաքանակի մեջ չեն ընդգրկվում:

Հիմնական բնակավայրերի վերաբերյալ 5-7-րդ սյունակների տվյալները պետք է ներառեն հիմնական բնակավայրերին ենթակա և ցուցակներում անմիջապես հիմնական բնակավայրից հետո գրանցված այլ բնակատեղերի վերաբերյալ ցուցանիշները:

Ցուցակի վերջում լրացվում է նաև գյուղական համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող բնակչության թվաքանակը (ձև-2):

8-րդ սյունակում գրվում է հիմնական բնակավայրի տարածքում հիվանդանոցների, մանկատների, հյուրանոցների, տուն-հանգրվանների (ծերերի և հաշմանդամների), գիշերօթիկ դպրոցների, տուրիստական բազաների, հանգստյան տների և նման այլ հիմնարկների հերթական համարները:

9-րդ սյունակում գրվում է այդ հիմնարկի լրիվ անվանումը (առանց կրճատումների):

10-րդ սյունակում գրվում է այդ հիմնարկում մշտական բնակվողների թվաքանակը, ներառյալ այնտեղ մշտապես բնակվող սպասարկող անձնակազմը:

11-րդ սյունակում գրվում է այդ հիմնարկներում **առկա տեղերի** (մահճակալների) քանակը:

9-11-րդ սյունակները լրացվում են այդ հիմնարկների ադմինիստրացիայի տվյալների հիման վրա:

8. Ավարտելով գյուղական բնակավայրերի ցուցակների լրացումը՝ ՀՀ ԱՎԾ-ի տարածքային բաժնի ղեկավարը և գյուղապետի աշխատակազմի քարտուղարը համատեղ ստուգում են ցուցակներում բոլոր բնակավայրերի առկայությունը: Հիմնական գյուղական բնակավայրերի քանակի, (1-ին սյունակում գրանցված վերջին բնակավայրի համարը պետք է համընկնի տվյալ համայնքի տարածքում բնակավայրերի ընդհանուր քանակին), բնակելի տների, տնային տնտեսությունների, առկա՝ ներառյալ բացակայող բնակչության թվաքանակի, ժամանակավոր կացատեղերում առկա տեղերի քանակի վերաբերյալ տվյալները համեմատվում են սկզբնական հաշվառման տվյալների հետ:

9. Հանրագումարները հաշվելուց հետո գյուղապետի աշխատակազմի քարտուղարը ստորագրում է ցուցակը և սահմանված ժամկետին հանձնում այն ՀՀ ԱՎԾ-ի տարածքային բաժնի ղեկավարին: Վերջինս ստուգում է կազմված ցուցակների ճշգրտությունն ու ամբողջականությունը, դրանց համապատասխանությունը ՀՀ «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքով տվյալ տարածքի համար սահմանված բնակավայրերի ցանկի հետ, որից հետո ցուցակի մեկ օրինակը հանձնում է ՀՀ ԱՎԾ-ի մարզային վարչության ղեկավարին:

Ձև 2-գյուղական

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն
ՀՀ 2001թ. մարդահամար

Հաստատված է
ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի
28.02.2001թ *N 31* որոշմամբ

Գյուղական բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակ

Մարզ ______________________ *Տարածք* ______________________ *Համայնք* ______________________

Հիմնական բնակավայրի հերթական համարը	Այլ բնակատեղերի (տան, տների խմբի) հերթական համարը	Հիմնական բնակավայրի (բնակատեղերի և նրանց գտնվող տների) լրիվ անվանումը	Բնակավայրի հեռավորությունը համայնքի կենտրոնից (կմ)	Բնակավայրում հաշվառվել են: բնակելի շինությունները	տնային տնտեսությունները	առկա բնակչությունը, ներառյալ ժամանակավոր բացակայողները	Հիմնական բնակավայրում գտնվող ձեռնարկությունների, ճամբարների, հանգստյան տների, առողջարանների, գիտական կայանների, տուրիստական բազաների և այլնի: հերթական համարը	լրիվ անվանումը	մշտական բնակչության թվաքանակը	առկա տեղերի քանակը
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*
Ընդա-մենը		X	X					X		

Տեղեկանք՝ *համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող բնակչության թվաքանակը* __________

Գյուղապետի աշխատակազմի քարտուղար ______________________
/ստորագրություն/

Նշումների համար .....

Նշումների համար .....